



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ

ՄԱՐԶԻ

ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2018Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Լուկաշին
Համայնքի ղեկավարի
2018 թ-ի կատարված աշխատանքների

Հաշվետվություն

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզի Լուկաշին համայնքի ավագանու անդամների և համայնքի 170 բնակիչների

08-01-2019թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուկաշին համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

2018թ-ի ընթացքում համայնքապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել գյուղի սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղղությունները:

Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2018թ-ի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում եմ Ձեզ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև կազմակերպվում է հացահատիկի բերքահավաքի աշխատանքները:

Համայնքն ունի իր առանձնահատկությունները:

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ, այգեգործությամբ և պտղաբուծությամբ:

Կան նաև չմշակված հողատարածքներ, որի հիմնական պատճառներն են՝

1. Ոռոգման ջրի բացակայությունը
2. Հողասեփականատերերի բացակայությունը:
3. Մեխանիզացիայի պակասը
4. Ուշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքներին, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքներին և պարբերաբար կատարվում է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքները:

2018թ –ի ընթացքում կատարվել է նաև դաշտամիջյան ճանապարհների և առուների վրա խողովակների ընթացիկ վերանորոգումներ, փոսայցումներ և Մաստաբա սելաֆի մասնակի մաքրման աշխատանքներ:

Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության գործում, ժամանակին կատարվում է բոլոր հակահամաճարակային միջոցառումները, կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ: Կենդանիների շրջանում չի արձանագրվել հիվանդության դեպքեր:

Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործողության վրա: Ներկայումս համայնքում գործում է 5 առևտրի օբյեկտ:

**ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ**

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև ընդերքաօգտագործման վրա:

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման ուղղությամբ:

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ**

Կառավարության սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր:

Միստեմատիկաբար կատարվում է խմելու ջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ:

Սահմանվում է հսկողություն խմելու ջրի որակի, ինչպես նաև վարակազերծման նկատմամբ:

Միստեմատիկաբար, շաբաթը 1 անգամ կատարվում է աղբահանություն, այդ նպատակով հատկացված է և վճարվել է 2018թ-ի ընթացքում համայնքի բյուջեից 1 500 000 ՀՀ դրամ:

2018 թվականի ընթացքում՝ հունվար և դեկտեմբեր ամիսներին, համայնքի 8-րդ և 9-րդ փողոցներում անցկացվել են գիշերային լուսավորություն: Այդ ծրագրի համար համայնքի բյուջեից ծախսվել է 1 506 000 ՀՀ դրամ:

2018 թվականի ընթացքում համայնքի 8-րդ փողոցում կատարվել է գազաֆիկացում, աշխատանքները ավարտական տեսք չունեն շարունակվելու է 2019 թվականին: Կատրված աշխատանքի համար համայնքի բյուջեից ծախսվել է 900 000 ՀՀ դրամ:

Կատարվել են ճանապարհների ավազային փոսալցումներ, որի համար ծախսվել է 900 000 ՀՀ դրամ, կատարվել է նաև մասնակի ասֆալտապատում, որի համար համայնքի բյուջեից ծախսվել է 140 000 ՀՀ դրամ:

2018 թվականի ընթացքում վերանորոգվել է և ձեռք են բերվել խորքային հորեր, որի համար ծախսվել է 2 520 000 ՀՀ դրամ:

2018 թվականի հոկտեմբեր – նոյեմբեր ամիսներին կառուցվել է համայնքի մշակույթի տան բակը, ձեռք է բերվել տաղավար, տեղադրվել է խաչքար, նստարաններ, աղբամաններ, պարսպապատվել և լուսավորվել է ողջ տարածքը, համայնքի գերեզմանոցում կատարվել է ճանապարհների հարթեցում, ջրագծի կառուցում, կատարված աշխատանքների համար համայնքի բյուջեից ծախսվել է 2 790 000 ՀՀ դրամ:

2018 թվականի հոկտեմբեր ամսին համայնքի զբոսայգում կառուցվել է 200 քառ. մետր մակերեսով խաղահրապարակ, խճապատվել և կառուցվել է քայլուղին, ցանկապատվել է տարածքը, անցկացվել է 90 մետր երկարությամբ ջրագիծ, տեղադրվել են հենասյուններ, լուսավորության համար լուսային լապտերներ և տեղադրվել են կառուսելներ, ծրագրին մասնակցել է «Գյուղատնտեսական ասոցիացիա» ՀԿ, Ջինշյան հիմնադրամը, համայնքի բյուջեից ծախսվել է 900 000 ՀՀ դրամ:

2018 թվականի հոկտեմբեր – դեկտեմբեր ամիսներին համայնքի մանկապարտեզում սկսվել է հիմնանորոգման աշխատանքներ, տեղադրվել է նոր դռներ և պատուհաններ, վերանորոգվել է սանհանգույցը, համայնքի բյուջեից ծախսվել է 1 797 000 ՀՀ դրամ, սակայն դեռ շարունակվում են հիմնանորոգման աշխատանքները:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց:

Աշակերտների թիվը՝ 278:

Աշխատողների թիվը՝ 42-ը, որից՝ ուսուցիչներ՝ 38:

Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա: Մեպտեմբերի 1-ի առթիվ համայնքի դպրոցին նվիրատվության կարգով տրվել է ջրի ապարատ: Համայնքապետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ մարտի 8, ապրիլի 7, մայիսի 9, մայիսի 28, սեպտեմբերի 21, հոկտեմբերի 5, Ամանոր:

Հունիսի 1-ին՝ նվիրված երեխաների պաշտպանության օրվան, համայնքի երեխաների համար, համայնքի զբոսայգում կազմակերպվեց մեծ միջոցառում, որի համար համայնքի բյուջեից ծախսվել է 500 000 ՀՀ դրամ:

Ամանորյա տոնը գեղեցիկ և հեքիաթային դարձնելու համար, համայնքապետարանը լուսավորել, զարդարել և տոնական միջոցառում է կազմակերպել, որի համար համայնքի բյուջեից ծախսվել է 883 000 ՀՀ դրամ:

2018 թվականի ավարտական երեկոյի համար շրջանավարտներին տրվել է 100 000 ՀՀ դրամ:

2018 թվականի ընթացքում համայնքի ուսանողներին տրվել է ուսման վարձի մասսնակի փոխհատուցում 975 000 ՀՀ դրամի չափով:

Ուշադրության կենտրոնում է գտնվում սպորտի զարգացումը :

Համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության կենտրոնում է առողջապահության ոլորտը: Սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 840 000 ՀՀ դրամ:

Աջակցում է սանիտարահիգիենիկ վիճակի բարելավմանը, հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը: Վերահսկում է առողջապահական հիմնարկների աշխատանքները:

Համայնքում գործում է <<Խնամակալության և հոգաբարձության>> հանձնաժողով, որի հիմնական խնդիրը թափառաշրջիկ, անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումն է: Պարբերաբար դրամական օգնություն է տրվում երկկողմանի և միակողմանի ծնողագուրկ երեխաներին:

Ուշադրության կենտրոնում է գտնվում զոհված ազատամարտիկների և սոցիալ անապահովների ընտանիքները: Յուրաքանչյուր մահացածի համար ծաղկեպսակ է գնվել, ոմանց ընտանիքներին էլ տրվել է դրամական օգնություն:

Համայնքում հաշվառված են ընդամենը՝ 255 թոշակատուներ՝ ծերության և աշխատանքային : Նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 71: Թոշակները և նպաստները տրվում են ժամանակին:

Համայնքի շուրջ 35 բաժանորդներ օգտվում են թվային հեռախոսակապից:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը գորակոչի նկատմամբ: Ձորակոչից խուսափողներ չկան:

Համայնքի տնտեսությունների թիվը՝ 758, առկա բնակչության թիվը 1327 մարդ, գյուղատնտեսության մեջ զբաղվում են՝ 1169 մարդ:

2018 թվականի ընթացքում համայնքում ծնվել են 21 երեխա , մահացածների թիվը՝ 19 :

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2018 թվականի ընթացքում հավաքագրվել է եկամուտներ՝

N	անվանումը	Տարեկան պլան	2018թ. տարեկան		Կատառղական %	
			պլան	փաստացի	2-րդ կիսամյակ	տարեկան
1	Հողի հարկ	12498.0	12498.0	4927.1		39.4
2	Գույքահարկ	6470.0	6470.0	4916.6		76.6
3	Տեղական Տուրքեր	250.0	250.0	200.0		80
4	Ոչ հարկային	-	-	-	-	-

	Եկամուտներ					
5	Պետ. Բյուջեից Տրամադրվող դոտացիա	35703.5	35703.5	35703.5		100
5	Հողի վարձավճար	593.0	593.0	137.5		23.2
6	ԴԱՀԿ					
7	Ընդամենը Վարչական բյուջե	55514.5	55514.5	45884.7		
8	Հողի օտարումից Մուտքեր					
9	Վարչական բյուջեի Հատկացում ֆոնդային Բյուջե	6883.0		2991.0		
10	Տարեսկզբի ազատ Մնացորդ					
	Ընդամենը	55514.5		45884.7		

Բերված աղյուսակից երևում է, որ համայնքի բյուջեի եկամուտների զգալի բաժինը պլանավորվել և հավաքագրվել է 2018 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում: Վարչական բյուջեի գծով տարվա ընթացքում հավաքագրվել է ընդամենը եկամուտների 82.6%-ը, այդ թվում սեփական եկամուտների պլանը կատարվել է 51.4 %-ով:

2018 թվականի ընթացքում կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով՝

N	Ծախսերի անվանումը	2018թ. տարեկան		Կատարողական %
		պլան	փաստացի	

1	Տեղական Ինքնակառավարում	21313.8	19734.0		92.6
2	Համայնքի այլ Ծախսեր	7323.0	6086.6		83
3	Աղբահանություն	2448.0	2397.6		97.9
4	Մշակույթ ռադ, հեռ.	3217.5	2735.5		85
5	Կրթություն	6420.0	5227.7		81.4
6	Սոց. Օգնություն	2717.0	840.0		30.9
7	Ջրային տնտեսություն/արտիզաններ/	8828.0	8379.7		94.9
8	Պահուստային հատկացում ֆոնդի	6883.0	2991.0		
9	Ճանապարհային տրանսպորտ Փողոցների լուսավորություն	1240.0	1144.0		92.2
	Հուշարձանների պահպանություն /գրոսայգի/	4000.0	2256.0		56.4
		3577.2	1577.1		44.1
10	Գյուղատնտեսություն	680.0	676.2		99.4
11	Տնտեսական հարաբերություններ	-6250.0	-6254.5		
	Ընդամենը	55514.5	44799.9		

<<Քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգի մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջի համաձայն, Լուկաշինի համայնքապետարանում 2018 թվականի ընթացքում ստացվել է 54 դիմում:

Դիմումներում բարձրացվել են սոցիալական, ֆինանսական, հողային, շինարարության և այլ բնույթի հարցեր, որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել են պատշաճ լուծումներ:

Ընթացիկ ժամանակահատվածում համայնքապետարանում ստացվել են 414 գրություն, հղվել է 232 պաշտոնական գրություն: Քաղաքացիներին տրվել է թվով 656 տեղեկանքներ: Տրվել է համայնքի ղեկավարի 14 կարգադրություն և կայացվել է համայնքի ղեկավարի 27 որոշում:

2018 թվականի ընթացքում համայնքապետարանի աշխատակիցների փաստացի թվաքանակը կազմել է 12 մարդ, որից համայնքի ղեկավար, 1 հայացողական պաշտոն, 4-ը համայնքային ծառայողներ, 4-ը տեխնիկական աշխատողներ, 1 անասնաբույժ, 1 գրադարանի աշխատող:

2018 թվականի ընթացքում ընթացքում աշխատավարձի և սոց. վճարումների պարտքեր չկան:

2018 թվականի ընթացքում ընթացքում համայնքի ավագանին գումարել է 9 նիստ՝ 50 որոշումներով, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով, ուժերով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

1. Մանկապարտեզի շենքի վերանորոգման շարունակություն:
2. Ճանապարհների ասֆալտապատում՝ միջմարզային ճանապարհի Լուկաշին-Արմավիր հատված:
3. Գյուղտեխնիկայի ձեռք բերում /տրակտոր և գյուղգործիքներ, կոմբայն/:
4. Կուլտուրայի տուն:
5. Համայնքի զբոսայգու բարեկարգում:

ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝

Կ. ՄԿՐՏՉՅԱՆ